



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

281

2(075)  
Q-44

| 887

2010

2001

Հայոց Ծանօթի Բարձրագույն Պահակ

1075  
Հ-44

1829

աշխաւակիրզի.

# ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՈՒԽՈՒՄՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԹԻԹԵԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

## ՊԱՏԿԵՐԱՁԵՐ

(Համաձայն Ամենայն Հայոց Վեհափոխ Կութականութեան  
հաստատուած ձրագրի)



Վ Ճ Ա Տ Տ Ը Ր Ե Յ

220

56-ԱՀ

ԳԻՒՏ ՔԱՀԱԿԱՅ ԱԴԱՆԵԱՅ

Տ Փ Ի Ւ

ՅՈՎԱՆՈՅ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊՈՐՈՒ

ՕՐԵԼԵՅՆ ՓՈԳՈՅ, № 1 և 2

1887.

810751  
U-44

44 ✓

1529

## ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

220

556-42

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ-ԽԻՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ



1004  
9653



P E R S U P T A

Գլուխ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՂԱՆԵԱՆՑ

Сибирь, 17.09.00 г. Уполномоченный Национальной  
СФНСУ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵՅՆ ՓՈՎՈՅ, № 1 | 2

1887.



S. S. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀՈՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Января 1887 г.



1993年1月1日

新編增補古今圖書集成

Типографія І. Мартиросіанца, Орбел. ул., д. № 1 и 2

## Ա Զ Դ

Հայոց եկեղեցական - ծխական ուսումնաքանիների նույնագիրը նոր պահանջ յառաջացրեց մեր կրօնի զառագրքերի վերաբերմանը:

Յաշտնի է, որ այդ ծրագրով հին և նոր կտակարանի կանոնաւոր ուսումնը աւանդված է չորրորդ և հինգերորդ տարբիներում. իսկ առաջին երեք տարբիների համար որոշուած են հատընտիր աղօթքներ, գլխաւոր տօների բացատրութիւններ և համառօտ բացատրութիւններուց խորհրդական աղօթքների: Մեր ցաշսօթ հրատարակուած կրօնի գառագրքերից և ոչ մինը չպարունակելով ծրագրած դասընթացքը ամբողջապէս՝ զգացվում էր այդ ծրագրին համեմատ կրօնի գառագրքերի կարեռութիւնը առաջին երեք տարբիների համար:

Ահա այդ կարեքը ստիպեց ինձ ձեռնարկել եռամեայ կրօնի ուսումնան դասագրքերի պատրաստութեան, որոնցից երկուրդ տարուայ կրօնի գառագրիքը լրյու եմ ընծայուժ այժմ:

Թէ որքան յաջողել է ինձ խօսել մանուկների հետ, տօների բացատրութիւնները յարմարացնել մանկական հասակին և հասկացողութեանը, այդ թող որոշեն հայ կրօնուասուցիները, որոց արդար զատաստանին յանձնում եմ սոյն դասագրքը:

ԳԻՒՏ ՔԵՐԵԿԱՑ ԵՎԵՆԵԲՈՑ

## Ց Ա Ն Կ

ՄԱՍՆ Ա.

Ա Հ Օ Թ Ք Ն Ե Ր

- ա. Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր.
- բ. Լուր ձայնից մերոց.
- գ. Աչք ամենեցուն.
- դ. Փառք քեզ Տէր, փառք քեզ.
- ե. Սուրբ ես Տէր Աստուած մեր.
- զ. Յիշեա Տէր զպաշտօնեալս քո.
- է. Խաչ քո եղիցի մեղ ապաւէն:

ՄԱՍՆ Բ.

Տ Օ Ն Ե Ր

- ը. Սուրբ Կոյս Մարիամի աւետումը.
- թ. Քրիստոսի ծնունդը.
- ժ. Յիսուսին տանում են տաճարը.
- ժա. Քրիստոսի մկրտութիւնը.
- ժբ. Յիսուսի քարոզութիւնները.
- ժգ. Քրիստոսի յարութիւնը.
- ժդ. Քրիստոսի համբարձումը.
- ժե. Հոգւոյն Սրբոյ գալուստը.
- ժգ. Քրիստոսի սուրբ Խաչի վերացումը.
- ժէ. Քրիստոսի սուրբ Խաչի գտնելը:

## ՄԱՍՆ Ա.

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

Ա.

Գոհանամք զքէն, Տէր Կստուած մեր,  
որ զարթուցեր զմեղ՝ի հանգստենէ քնոյ  
շնորհիւ ողորմութեան քո: Զարթոն զմիտս  
մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Կստուած  
մեր, զե տեսցեն աչք մեր զփրկութիւն քո:  
Եկեսցէ և բնակեսցի առ մեղ Կստուա-  
ծութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և  
պահապան լիցի՝ի վերայ պաշտօնէից քոց:  
Եւ զմեղ, զծառայքս քո արժանի արա՞՝ի  
տուէ և՝ի գիշերի և յամենայն ժամու միշտ  
խորհիլ՝ի սէր պատուիրանաց քոց: Եւ գո-  
հանալով փառաւորել զհայր և զՈրդի և  
զԱռուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից. ամէն:

Բ.

Լուր ձայնից մերոց, Տէր Աստուած  
մեր. ընկալ զաղաշանս մեր, զհամբարձումն  
ձեռաց մերոց՝ և զբանս աղօթից, սրբելով  
զերեկոյի պատարագս մեր 'ի հոտ անուշից՝  
'ի հաճոյս քեզ պատրաստել:

Յաւել 'ի մեղ, Տէր ամենակալ, զհա-  
ւատ, զյոյս, զսէր, և զամենայն գործս ա-  
ռաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց  
բարեսիրաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշ-  
տութեամբ 'ի տուէ և 'ի գիշերի, արժա-  
նաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց  
փրկութեան. և վասն հոգեոր կենաց աղա-  
շել զքեզ, Տէր, և գտանել 'ե քէն զշնորհս  
և զողորմութիւն. և գոհանալով փառաւո-  
րեսցուք զհայր և զՈրդի և զՈուրբ Հո-  
գիդ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Գ.

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսաս, և  
դու տաս կերակուր նոցա 'ի ժամու: Տաս  
դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո

և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ  
կամօք քովք:

Դ.

Փառք քեզ Տէր՝ փառք քեզ, թագաւոր  
փառաց. որ ետուր մեզ կերակուր ուրա-  
խութեան. և լցուցեր զսիրտս մեր  
'ի լիութենէ ամենաբաւական ողորմութեան  
քո. լցո և այժմ զմեղ հոգւովդ քով սրբով.  
որպէս զի գտցուք առաջի քո հա-  
ճոյք, և մի՛ ամաչեցեալք, զի դու գաս և  
հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր.  
և քեզ վայելէ փառք իշխանութիւն և  
պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Ե.

Սուրբ ես Տէր Աստուած մեր՝ հզօր և  
փառաւորեալ. որ նստիս 'ի կառս քերովիք-  
ականս և լոյս ծագես յարարածս քո:  
Լուսաւորեա զմեղ Տէր 'ի ժամ առաւ-  
տուս, որպէս զի 'ի ծագել լուսոյ տունջե-  
անս՝ ծագեսցի առ մեղ գութ մարդասի-

ըութեան քոյ: Հեռացո՛ի մէնջ, Տէր, զիսա-  
բէութիւն սատանայի. և զբոնութիւն նո-  
րա խորտակեա՛ աղօթիւք և բարեխօսու-  
թեամբ ամենայն սրբոց: Այս և զերկիրս  
պտղաբերս 'ի մնունդս ծառայից քոց: Յո-  
րոց հանապազ փառաւորեալ գովի ամենա-  
սուրբ Երրորդութիւնդ. այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զ.

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո. զծնողսն  
մեր. զվարդապետս. զեղբարս. զընկերս. զկե-  
րակրիչս. զուխտաւորս. զճանապարհորդս.  
զչանգուցիչս. զվաստակաւորս. զխոստովանո-  
ղըս. զապաշխարոզս. զգերիս. զչիւանդս.  
զնեղեալս. զիշխանս. զչարարարս. զբա-  
րերարս. զթշնամիս. զատելիս և որբ պա-  
տռւիրեցին մեզ հաւատով:

Ե.

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր  
Յիսուս, յորժամ երեխս փառօք Հօր ընդ

ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի՛ ամա-  
չեսցուք յուսացեալքս 'ի քեզ այլ զօրու-  
թեամբ քով մեծաւ՝ բերկրեսցուք ընդ աջմէ  
քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ և որդիս տուն-  
ջեան:



կը ասաց նորան. «մի՛ վախենար, Վարի-  
ամ, որովհետեւ շնորհը գտար Աստծուց  
և աչա՛ պէտք է յղանաս և մէկ որդի ծնես,  
որի անունը Յիսուս կը գնես: Կա մեծ կը  
լինի և Բարձրեալի Որդի կասուի և Տէր Աս-

## ՄԱՍՆ Բ.

Տ Օ Ւ Ե Ր

Ը.

ԽՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱԽԵՏՈՒՄԸ

(Ղուկ. ա. 26—38)

Մօտ 1900 տարի առաջ Աստուծոյ  
Հրեշտակը մի անգամ Հրէաստանի Գալի-  
լիա գաւառի Կազարէթ քաղաքում երևե-  
ցաւ մի կոյսի, որ նշանուած էր Պատմի  
ցեղեց մի մարդու հետ, որի անունն էր  
Յովսէփ. իսկ կուսի անունը Վարիամ  
էր: Թէ Վարիամը և թէ Յովսէփը թա-  
գաւորական ցեղեց էին: Հրեշտակը ասաց  
Վարիամին. «Ուրախացիր Բերկրեալդ, Տէրը  
քեզ հետ է»: Վարիամը այս խօսքերը որ  
լսեց՝ շփոթուեցաւ և մտածում էր թէ ի՞նչ  
բանի համար է այս ողջոյնը: Իսկ հրեշտա-



տուած պիտի տայ նորան՝ նորա հայր Պաւ-  
լի աֆոռը, Յակովի տան վերայ յատիտե-  
անս պէտք է թագաւորէ և նորա թագա-  
ւորութիւնը վերջ չը պէտքէ ունենայ: Վա-  
րիամը երբ չը հաւատաց հրեշտակի խօսքին,

Հրեշտակը շարունակեց ու ասաց. «Առոք  
հոգին պէտք է իջնի քո վրադ և հարձ-  
բելու զօրութիւնը հովանի կը լինի քեզ.  
որովհետեւ նա, որ պէտքէ ծնուի քեզանից,  
սուրբ է և Աստուծոյ որդի պէտք է կոչուի:  
Աստուծոյ համար ամենեւին անկարելի  
բան չը կայ: Յետոյ Մարիամը հնա-  
զանդուեցաւ Աստուծոյ կամքին, ասելով՝ ես  
Տիրոջ աղախինն եմ, թող լինի ինձ ինչ-  
պէս որ ասացիր: Եւ հրեշտակը հեռացաւ  
նորանից:

Այս բանը պատահեցաւ ապրիլ ամ-  
սի 7 ին, այդ պատճառով էլ մնաք այդ  
տօնը կատարում ենք այդ օրը:

Դ պատիւ սուրբ կոյս Մարիամի, ո-  
րին ասում ենք նաև Տիրամայր-Աստուծ-  
ածին, երգում ենք այս երգը.-

Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ  
քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս և  
օրհնեալէ պտուղ որովայնի քո:


Թ.

ՔՐԻՍՏՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ.

(Մատթ. Ա. 18-25. Ղուկ. Բ. I-22)

Մեզանից շատ հեռու մի երկրում եր-  
կու հոգի ճանապարհ էին գնում. այդ երկի-  
րը գտնվումէ գեղի հարաւ, ուր աւելի  
տաք է, քան թէ մեր կողմերը. այն կող-  
մը, որտեղից գալիս են դեպի մեր երկիրը  
երգող թըրչունները. ուր որ մեր կողմերից  
շատերը գնում են ուխտ և ձեռքերը դրոշ-  
մած (դաջած) յետ են գալիս. ահա այն երկ-  
րումն էին ճանապարհ գնում. այն երկիրը  
Հրեաստանն էր, Հրեաների աշխարհը.  
նորա գնում էին հեղղեչեմ քաղաքը:  
Հեղղեչեմը մեծ քաղաք չէր. բացի տեղա-  
կան բնակիչներից այդ միջոցին այնտեղ հա-  
ւաքուել էին մեծ բազմութիւն ուրիշ տե-  
ղերից, որոնք եկել էին այնտեղ իրանց ա-  
նունները գրել տալու, որովհետեւ հրամա-  
յած էր, որ աշխարհագիր անեն, այն է  
բոլոր ժողովրդեան ցուցակագրեն: «Նորա  
ման եկան ամբողջ քաղաքը և տեղ չը

գտան իրանց բնակութեան համար. ուր պէտք է մնային ուրեմն. անպատճառ հիւրանոցում. բայց ամբողջ քաղաքում հիւրանոց էլ չկար. ուրեմն ի՞նչ պէտքէ անեին. զուրսը մնալ չէին կարող. մարդկանց բնա-



կարան չը կար, բայց անասունների գոմեր շատ կային. աչա այդպիսի գոմերից մէկում, որ շինուած էր մի այրի մէջ, տեղ գտան նոքա գիշերն անցկացնելու: Այրի

մէջ մսուր էլ կար, խոտ ու

անասունների համար:

Այդ գիշերը միևնոյն այրի մէջ լուսուած նոցա մի սիրուն մանուկ պարզեց: Այդ մանուկին չէին կարող օրօրոցի մէջ պարկեցնել. ով կը տար այնտեղ օրօրոց կամ գեղեցիկ շորեր. նորան փաթաթեցին խանձարուրի մէջ և դրին այն մսուրի մէջ, ուր ոչխարը, չորթը, եզը, կովը և ուրիշ անասուններ խոտ ու դարման են ուտում: Մանուկը փափուկ անկողին էլ չունէր, այլ պարկած էր դարմանի վերայ: Այս մանուկըն էր Յիսուս Փրկիչը: Մարիամը շատ էր սիրում այն մանկան. ախոռը մութըն էր, իսկ այն տեղը, ուր մանուկն էր պարկած, լուսաւորուած էր:

Յովսէփն ու Մարիամը իրանց այս ուրախութիւնը սիրով կը պատմէին ուրիշ մարդկանց, եթէ միայն ունենային հարեւաններ: Քաղաքի բնակիչները քնած էին. ուրեմն ով կարող էր իմացնել նոցա Փրկչի ծնուելու լուրը. հովիւններն էլ դաշտումն էին. նոքա հսկում էին իրանց հօտերը, որ գա-

զանները չը գողանան գառները։ Այդ բանը Աստուած այսպէս կարգադրեց .—մի հրեշտակ յանկարծ երևեցաւ դաշտում գրտնուած հովիւներին. դաշտում բոլորովին մութըն էր, որովհետեւ գեշեր էր. երբ հրեշտակն երևեցաւ՝ յանկարծ նորա շուրջը լուսաւորուեցաւ. հովիւները այդ բանի վերայ խիստ վախեցան. հրեշտակն ասաց նոցա. մի՛ վախենաք, մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ, որ բոլոր ազգերին էլ պատկանում է. որովհետեւ այսօր ձեզ Փրկիչ ծնուեցաւ, որ է Յիսուս Քրիստոս. դուք կը գտնէք մանկանը խանճարուրի մէջ փաթլթած և մսուրի մէջ դրած։ Յետոյ յանկարծ այդ հրեշտակի մօտ եկան շատ ու շատ ուրիշ հրեշտակներ, որոնք փառաբանում էին Աստուծոյ և ասում. «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն»։

2. Երբ հրեշտակները հեռացան՝ հովիւները ասացին մէկմէկու. եկէք գնանք Բնեղեչէմ քաղաքը և պարտենք մանկանը, որի մասին հրեշտակը մեղ յայտնեց։ «Կո-

քա թողին իրանց հօտերը և շտապով գնացին պարտելու մանկան. և գտան հրեշտակի տուած նշանի համեմատ այրի մէջ. տեսան մանկան խանճարուրով պատած և մսուրի մէջ դրած, տեսան նաև Յովակին ու Մարիամին. աղօթում են Փրկչին և Մարիամին պատմում են, թէ ինչպէս հրեշտակը երևեցաւ նոցա և պատմեցին այն ամենը, ինչ որ տեսել էին ու լսել։

Հովիւները էլ չը մնացին Փրկչի մօտ. այլ յետ դարձան դաշտը իրանց ոչ խարների մօտ. փառաբանում էին Աստուծոյ, որ «Կա Փրկիչ է տուել իրանց և պատմում էին ամենքին, թէ տեսան Փրկչին։

Ինչպէս որ հովիւները ուրախ էին Փրկչի ծնուելու վերայ, այնպէս էլ մենք ուրախանում ենք ամեն տարի յունվարի 6 ին, երբ ամենքս հանդիսով տօնում ենք մեր Փրկչի ծնունդը և այդ ժամանակ երգում ենք այս շարականը։

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ

աւուր յայտնեցաւ. Հովիւք երգեն  
ընդ հրեշտակս, առան աւետիս աշ-  
խարհի: Ծանաւ նոր արքայ ՚ի Շեղ-  
ղեհեմ քաղաքի. որդիք մարդկան  
օրհնեցէք, զի վամն մեր մարմնա-  
ցաւ:

Փ.

ՅԻՍՈՒՄԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՁԱՐԸ — ՏԵՍԻՆԸՆԴԱՌԱՋ


(Ղուկ. թ. 22-40.)

Յիսուսի ծնուելոց քառասուն օր  
յետոյ ծնողները տարան Փրկչն Ե-  
րուսաղեմ:

Հրէաների մէջ սովորութիւն կար,  
որ երբ երեխան քառասուն օրական կը  
դառնար՝ պէտք է նորան տանէին տաճա-  
րը, նուիրէին Աստծուն և միւնոյն ժա-  
մանակ պէտք է զոհ մատուցանէին: Հա-  
րուստները զոհում էին մի մի գառը, իսկ  
աղքատները մի զոյգ աղաւնի կամ  
տատրակ:

Յովսէփն ու Մարիամը շատ աղ-  
քատ էին, այդ պատճառով նորա գառան  
փոխարէն տարան իրանց հետ մի զոյգ  
աղաւնի:


Յովսէփն ու Մարիամը Փրկչն  
տարան Երուսաղէմի տաճարը և իրանց  
նուէրը տուին քահանային. քահանան  
օրհնեց Փրկչն և ընդունեց նուէրը:



Եմանեղ կար և մի ծերունի. Սուրբ  
Հոգին նորան յայտնել էր, թէ նա չը

պէտքէ մեռնի, մինչև որ խոստացած  
Փրկչին (Ա' Եսիային) չտեսնէ: Այդ ծերունին  
արդէն զիտէր, որ այդ ժամանակ Փրկիչը  
պէտքէ գայ տաճարը. ծերունու անունը  
Արմէ օն էր: Երբ ծնողները մանուկ Յի-  
սուսին տարան աաճարը՝ Աիմէօնը վեր ա-  
ռաւ նորան իւր զիրկը, փառք տուեց Աս-  
տուծոյ և ասաց. «այժմ արձակիր քո ծա-  
ռայիդ խաղաղութիւնով, Տէր, թող մեռ-  
նեմ, որովհետեւ իմ աչքերս տեսան այն  
փրկութիւնը, որ Դու պատրաստել ես ա-  
մեն ազգերի համար. ես տեսայ այն լոյսը,  
որ պէտքէ լուսաւորէ հեթանուներին. ես  
տեսայ «Քո ժողովրդի փառքը»: Յովսէփին  
ու Մարիամը շատ էին զարմանում այս  
լսածների վերայ: Աիմէօն ծերունին Ա' ա-  
րիամին ու Յովսէփին էլ օրհնեց:

Այստեղ մէկ կին էլ կար Ասերի  
ազգից և Փանուէլի աղջիկը. նա 84 տա-  
րեկան էր. նորա մարդը մեռէլ էր շատ  
առաջ և այնուհետեւ իւր բոլոր կեանքը անց  
էր կացնում տաճարում. պատէր պահում,  
աղօթք էր անում, բարի գործքեր էր կա-



Յիսուսը արդէն կանգնած էր Յորդանա-  
նի մէջ. ձեռքերը կրծքին էր զրել իսկ  
գլուխը բաշ զցել. նա աղօթում էր:  
Փրկիչը շղապատուած էր լուսով: Երե  
Փրկիչը աղօթում էր՝ երկինքը բացուե-  
ցաւ. Յովհաննէսը տեսաւ Աստուծոյ Առ-  
գին աղաւնու կերպարանքովիջնելիս Կորա  
վերայ և լսեց, թէ ինչպէս երկնքից Աս-  
տուած առում էր. «Դա է իմ սիրելի Որ-  
դին, որին ես հաւանեցի»:

Քրիստոսի մկրտութիւնը մենք առնում ենք Ծննդեան հետ միասին յունվարի 6 ին. այդ օրը հոգեորականները իբրև յիշատակ Քրիստոսի մկրտութեան՝ եկեղեցական հանգիստի գնում են գետը, ուր խաչը ջուրն են գցում և լսաչով, Աւետարանով և Սուրբ Ուեռնով օրհնում են ջուրը և ասում են այս տաղը.

Եյսօր ձայնըն հայրական յերկնից իջեալ հաճոյական, սիրեցելոյ Արդւոյ վկայ. այս յորդորէ, զետ յորդորէ, զետ Յորդանան. յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետըն Յովչաննէս:

Եյսօր եկեալ Աստուածորդին ՚ի Յորդանան խոնարհութեամբ, ջրով մկրտիլ ՚ի Յովչաննէ . . .

Եյսօր Ո՞կրտիչն Յովչաննէս ՚ի մկրտիլն հրաժարէր, թէ ինձ պարտէ ՚ի քէն մկրտիլ . . .

Եյսօր գոչէր քաղցր ձայնիւ Աստուածորդին Կարապետին՝ պարտէր զօրէնսն կատարել . . .

ԺԲ.


ՀԱՄԱՐՈՅ ԽԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ, ՄԱՏՆՈՒԹԵԱՆ, 2012ԱՐԵՆԱՅ ԵՒ ԹԱՂՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Յիսուս իւր քարոզներով աշխատումէր ապացուցանել և հաւատացնել մարդկանց թէ՝ ինքն Աստուծոյ որդի է, և ուղարկուած է՝ Կորանից՝ մարդկանց փըրկութեան ճանապարհը ցոյց տալու համար. Կա ասումէր՝ մեր երկնաւոր հայրը սուրբ է, զժած է, բարի է. Կա սիրում է մեզ աւելի քան մի հայր իւր հարազատ որդուն. ուրեմն մենք ևս պէտք է սրտով և հոգով սիրենք մեր երկնաւոր հօրը՝ Կորակամբը կատարելով, այն է պէտք է լինինք բարի, արդար, ծշմարիտ և զժած զէպի մեր ընկերները: Կա ասումէր ով այս իմ խրատները կկատարէ, նա է իմ հօր սիրելի որդին և ժառանգ արքայութեան: Յիսուս ինչ որ քարոզումէր խօսքով, նոյնը կատարումէր և գործով. — Կա բարի էր, սիրումէր մանուկներին, մեծերին, արդարնե-

րին, մեղաւորներին, Կյա խղճում, ողորմում  
և բարութիւններ էր անում այն ամեն մարդ-  
կանց, որոնք հաստատ հաւատով և յուսով  
իրան էին դիմում: Կյա բժշկումէր հիւանդ-  
ներին, դիւահարներին, կաղերին, կոյրերին,  
անդամալոյցներին և յարութիւն էր տալիս  
մեռելներին: Յիսուսի այս ամեն բարե-  
բարութիւնները և Կոստուածային նշաննե-  
րը տեսնելով՝ օրէցօր շատանում էր Կյո-  
րա աստուածութեանը հաւատացողների  
և Կյորա խրատները պահողների թիւր:


2. Բարի մարդիկ առհասարակ ունե-  
նում են աշխարհիս վերայ իրանց չար  
թշնամիքը. մեր բարի Փրկիչն ևս ունե-  
ցաւ իւր չար թշնամիքը: Առքա էին հրէից  
դպիրները (կարդացողները), քահանաները,  
քահանայապետները և սոցա հետեղները:  
Առքա՝ դրաից աստուածապաշտ ձեւացող՝ և  
գործքով՝ կեղծաւոր, ագոհ, խարերայ մար-  
դիկ էին, որոնց այս պակասութիւնները  
Յիսուսը իւր աներկիւղ ճշմարտախօսու-  
թիւնով հրապարակ էր հանում ամեն տեղ

և խայտառակում: Յիսուսի այս ընթաց-  
քը ձեռնտու չլինելով այս մարդկանցը՝  
թշնամացան Կյորա հետ և Կյորան սուտ վը-



կաներով դատապարտեցին դատաւորների  
առաջ՝ ինչպէս յանցաւոր, և շատ տեսակ  
չարչարանքներ տալուց յետոյ մեռցրին խա-  
չե վերայ:

3. Երկու հարուստ և բարի մար-  
դիկ, Յովսէփ Կրեմաթացին և Կիկոդի-  
մոսը հաստատ հաւատում էին Յիսուսի



աստուածութեանը, վեր առան Յիսուսի մարմինը խաչի վրայից և թաղեցին քարից փորուած մի գերեզմանի մէջ և մի մեծ սալաքար դրին գերեզմանի բերնին: Յիսուսը իւր մահուանից առաջ ասել էր թէ՛ երեք օրից յետոյ պէտք է յարութիւն առնեմ: Հրէաները այս խօսքին չեին հա-

ւատում, այլ կարծում էին թէ՛ Յիսուսի աշակերտները գիշերը կ'գան, կ'գողանան Նորա մարմինը և ամեն տեղ կհրատարակեն թէ՛ յարութիւն է առել. և այս պատճառով հրէից քահանայապետները կնքեցին Յիսուսի գերեզմանի դուռը և կարգել տուին զինուորներ, որ պահպանեն գերեզմանը:

ԺԳ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.

(Մատթ. էլ. Մաք. ժ. Ղուկ. իւ. Յով. է.)

1. Թաղման երրորդ օրը վաղ առաւօտեան արևի ծագելուց առաջ երկիրն սկսեց դողալ և շարժուիլ: Կոտուծոյ հրեշտակը եկաւ երկնքից: Հրեշտակի նստած տեղը կայծակի նման լուսաւորուեցաւ. Հրեշտակի շորերը սպիտակ էին և այնքան սպիտակ, որ կարծես թէ ձին լինէր:

Կյտ հրեշտակը գերեզմանի բերանի բարը վերցրեց և նստեց նորա վերայ. զինուորները այնպէս վախեցան, երբ գե-

տինը շարժուեց և լոյս եղաւ, որ կիսամեռ  
վայր ընկան գետին։ Իսկ յետոյ նոքա այդ  
բանը՝ ՚ի հարկէ յիշում էին։ Վերջապէս  
երկիւղը հետզիետէ աւելացաւ նոցա մէջ,  
այնպէս որ թողին ու փախան։ Փրկիչը  
դուրս է գալիս գերեզմանից և այստեղ  
թողնում է կտաւը։ Այլ ևս ոչ ոք չը մնաց  
բացի հրեշտակից, որ նստած էր քարի վե-  
րայ։


Աչա այդ միջոցին եկան այդտեղ ե-  
րեք կանայք. նոցա անուններն էին՝ Մա-  
րիամ Մագդաղինացի, Մարիամ Յակով-  
բայ և Սաղովմէ։ Կոքա շատ էին սիրում  
Փրկին. և կամենում էին Կորա մահուա-  
նից յետոյ էլ իրանց սէրը ցոյց տալ։ Դո-  
րա համար էլ գնել էին խունկ և իւղ, որ  
օծեն Փրկչի մարմինը։ Այսպէս էր Հրէից  
սովորութիւնը. ով մէկին սիրում էր՝ նորա  
մահուանից յետոյ օծում էր նորա մարմինը։

Եւ այսպէս կանայք առաւօտեան վազ  
եկան. արեգակը գեռ չէր ծագել. ճանա-  
պարհներին ոչ ոք չը կար գեռ. նոցա ոչ  
ոք չը հանդիպեց. նոքա դիտմամբ այսպէս

վազ էին եկել, որ ոչ ոք չը խանգարէ իրանց.  
նոքա խիստ տխուր էին. կանզնած էին  
մեծ քարի մօտ, որ ծածկում էր գերեզմա-  
նի դուռը և մտածում էին. գիտէին որ քա-  
րը մեծ է և ծանր, որովհետեւ թաղման  
ժամանակը տեսել էին, թէ որպիսի մեծ  
քար դրին գերեզմանի բերնին. նոքա շատ  
էին մտածում, թէ ով պէտք է քարը թա-  
ւալեցնէր. զինուորների վերայնոքա չէին էլ  
մտածում, որովհետեւ նոցա յայտնի չէր, թէ  
Յիսուսի գերեզմանը չսկում էին. երբ նոքա  
մտածում էին թէ ինչ անեն, նայում են  
գերեզմանին և տեսնում են քարը պլորած.  
այս բանը հեռուից էլ կարող էին տեսնել  
որովհետեւ քարը մեծ էր. իսկ հրեշտակին  
գեռ չէին տեսնում։ Մարիամ Մագդաղի-  
նացին վազում է իսկոյն և պատմում է ա-  
շակերտներին և Պետրոսին, լաց է լինում,  
կանչում է ու ասում. — Տիրոջը գերեզմա-  
նից հանել են և չը գիտեմ թէ որտեղ են  
դրել։

Միւս երկու կանայք գնում են  
դէպի գերեզմանը, ներս են մտնում և Տի-

րոջ մարմինը այնտեղ չեն գտնում: Գերեզմանում՝ չորս կողմք նայելուց յետոյ խիստ տիրեցին, որ չգտան Փրկչի մարմինը. Նորա տեսան երկու մարդ, ձիւնի



Նման սպիտակ և երկայն փայլուն շորեռով, որոնք նստած էին այնտեղ: Գերեզ-

մանը լուսաւորուած էր լուսով. կանայք զարհուրում էին, լուսափայլ մարդկանց չկարողացան նայել և ընկան գետնի վերայ:

2. Այդ երկու մարդկանցից մինը՝ Հրեշտակը գետեր, թէ կանայք ումն էին որոնում. ուստի և ասաց. մի՛ վախենաք, գիտեմ, որ Յիսուս Նազարենուն էք խրնդրում, կենդանուն մեռելների մէջ ինչո՞ւ էք վնատում, եկէք և տեսէք ուր որ Կորան դրել են. և յետոյ գնացէք ասացէք աշակերտներին և Պետրոսին, թէ Քրիստոսը յարութիւն է առել և կենդանի է: Հրեշտակը յիշեցնում էնոցա, ինչ որ Փրկիչն ասել էր, թէ Ես պէտք է խաջուեմ, թաղուեմ, բայց երբարդ օրը յարութիւն կառնեմ: Կանայք իսկոյն յիշեցին Փրկչի խօսքերը, որ արտամութիւնից մոռացել էին: Կոքա էլ շտապեցին աշակերտներին իմաց տալու, որ նոքա էլ ուբախանան այս բանի վերայ: Խակ իրանց պատահողներին ոչինչ չասացին, որովհետև խիստ վախենում էին:

Փրկիչը ձանապարհին պատահեց նոցա. Նոքա նայում էին Կորան և ուրա-

խանում. իսկ Մարիամ Մագդաղինացին կրկին դարձաւ գերեզմանը և լաց էր լինում. այն ժամանակ Քրիստոս դուրս եկաւ նորա առաջ. Մարիամն քնկաւ Կյորա ոտները, լաց էր լինում և աղօթում. նա առաջնը տեսաւ Փրկչին նախ քան միւս կանանց պատահելը:

Այս քանը պատահեց Օտակի կիւրակէին. դորա համար էլ այդ օրն ենք տօնում Քրիստոսի յարութիւնը. այդ տօնին պէտքէ յիշենք, որ Փրկիչը խաչուեց, թաղուեց և մահուանից երրորդ օրը յարութիւն առաւ:

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս ամէն:

---

ԺԴ.

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

(Մարկ. Ժ. 19. Ղուկ. Էդ. 49—59. Գործք առաքելոց  
ա. 1—14)


Քրիստոս իւր յարութիւնից յետոյ քառասուն օր էլի մնաց երկրիս վերայ. այդ քառասուն օրուայ ընթացքում շատ անգամ եկաւ իւր աշակերտների և ուրիշ բարեպաշտ մարդկանց մօտ և ցոյց տուեց դոցա, որ ինքը մեռած չէ, այլ կրկին ապրում է: Աշակերտները բոլորն էլ տիսուր էին, երբ Քրիստոս խաչի վերայ մեռաւ. իսկ այժմ ուրախանում են, որ Կա կրկին կենդանի է:

Երբ յարուցեալ Փրկիչը աշակերտների մօտ էր գալիս, սովորաբար կարծ ժամանակ էր մնում նոցա մօտ. մի անգամ էլ յանկարծ անյայտացաւ նոցա աչքից:

Վիանի որ նոցա մօտ էր, շատ բաներ ասաց նոցա. Եւս ասում էր, թէ շուտով Աստուծոյ մօտ պէտք է գնայ, թէ նոցա այլ ևս տեսնելու չէ:

Ո՞հ անդամ Յիսուս իւր բոլոր աշակերտներին հաւաքեց մի սարի վերայ և ասաց նոցա. երկնքում և երկրի վերայ ամենայն իշխանութիւն տուած է ինձ. ինչ պէս ինձ ուղարկեց հայրը, այնպէս էլ ես ձեզ եմ ուղարկում. ուստի գնացէք այսուհետև և բոլոր հեթանոսներին քարոզեցէք և մկրտեցէք նոցա Հօր, Որդուց և Սուրբ Հոգու անունով: Սովորցրէք նոցա ոյն բոլորը, ինչ ես պատուիրել եմ ձեզ: Եւ ահա Տէրը կանգնած է իւր աշակերտների հետ Զիթենեաց սարի գլխին. Նոքա եկել էին Երուսաղէմից և բարձրացել էին այստեղ: Երուսաղէմը շատ մօտիկ է Զիթենեաց սարին: Քրիստոս իւր տասներկու առաքեալների հետ այս լեռան վերայ խօսեց ու ասաց.—սպասեցէք Երուսաղէմում մինչև որ կուղարկեմ ձեզ մօտ միսիթարող Սուրբ Հոգին, ինչպէս որ խոստացել եմ:

Այս որ ասաց բարձրացրեց ձեռքերը և օրհնեց նոցա և համբարձաւ երկրից, ամպը ծածկեց Փրկչին նոցա աչքերից, այնպէս որ այլ ես չը տեսան Կորան:



Աշակերտները խիստ զարմացան և ապշած երկինք էին նոցում Զիթոջ ետեից. ահա երեւցան նոցա երկու մարդ սպիտակ

շորերով, որոնք կտնգնած էին նոցա մօտ և ասում էին. ինչ էք կտնգնել այստեղ և երկինք նայում. այս Յիսուսը, որ ձեզանից հեռացաւ ու երկինք բարձրացաւ՝ կըրկին կըգայ: Աշակերտները այս բանի վերայ շատ ուրախացան և աղօթեցին. և Ձիթենեաց սարից յետ դարձան Երուսաղէմ, ինչպէս Փրկիչը նոցա հրամայել էր: Ի՞այց նոքա այլ ևս տիսուր չէին, որ Փրկիչը նոցա մօտ չէր. նոքա սյժմ շատ էին ուրախանում. միշտ տաճարումն էին, գովարանում և օրհնում էին Աստուծուն:

Այս տօնը մենք կատարում ենք Զատկի տօնից քառասուն օր անց և կոչվում է Համբարձումն:

---


Ժ Ե.

ՍՈՒՐԲ ՀՈՒՈՒ ԳԱԼՈՒՍԸՆ.

(Գործք առաքելոց ու բ.)

Փրկիչն այլ ևս իւր աշակերտների մօտ չէ, որ Կորան տեսնել կարողանան. Կա գնացել է երկինք. բայց երբ Կա դեռ աշակերտների մօտ էր, քարողում էր նոցա և ասում էր, թէ երբ Ես ձեզնից կը հեռանամ, Առւրբ Հոգին երկնքից կուղարկեմ, նա միշտ ձեզ մօտ կը լիսի և կը միսիթարէ ձեզ. մնացէք Երուսաղէմում մինչև Առւրբ Հոգին կընդունէք: Այսպէս էլ կատարեցին աշակերտները. նոքա մնացին Երուսաղէմում, վերնատանը աղօթում էին Աստուծոյ և սպասում էին Առւրբ Հոգուն: Այժմ Հոգեգալուստն է և աշակերտները տասն օրէ ինչ որ սպասում են: Հոգեգալուստն նոքա հաւաքուած էին վերնատա-

նր. նոցա մօտ զրած էին գրքեր, որոնք  
խօսում էին Աստուծոյ մասին. այդ գրքերը  
Սուրբ Գիրքն են, որ աշակերտները  
յաճախ կարդում էին. առաջուան գրքերը  
մեր գրքերի նման չեն. այլ փաթաթած  
էին: Աշակերտները շատ սիրով էին միմե-  
անց հետ. կոխ, անբաւականութիւն չու-  
նէին. ինչ առել, որ նոքա կազօթէին Աս-



տուծոյ, որ շուտ ուղարկէ Սուրբ Հոգին:  
Եւ ահա յանկարծ մի խիստ քա-

մի բարձրացաւ. այն տանը, ուր նստած  
էին աշակերտները, իջաւ Հոգին Սուրբը  
և Հրեղէն լեզուների բաժանուելով նստաւ  
նոցանից ամէն մէկի վերայ և ամենքը լք-  
ցուեցան Սուրբ Հոգւով:

Աշակերտները աղօթում էին Աս-  
տուծոյ և շնորհակալութիւն յայտնում  
Կորան, որ Փրկիչ ուղարկեց իրանց համար  
և Որը նոցա համար մեռաւ. նոքա աղօ-  
թում էին և Փրկչին, Որ իւր անձը զոհեց  
նոցա համար:

Ո՞եզանից հեռու երկիրներում բր-  
նակվում են ուրիշ մարդիկ, որոնք խօսում  
են օտար լեզուներով. նոցա խօսածները  
մենք չենք կարող հասկանալ: Երուսաղէմից  
հեռու էլ կենում էին մարդիկ, որոց լեզու-  
ները աշակերտները չը գիտէին: Այդ օ-  
տար երկիրների մարդկերանցից շատերը  
եկել էին Երուսաղէմ հոգեգալստեանը.  
Երբ աշակերտները Հոգոյն Սրբոյ շնորհն  
ստացան, սկսեցին այդ օտար մարդկանց  
լեզուներով էլ խօսել. լսողները զարմանում  
և ասում էին միմեանց. չէ որ սոքա ամեն-

Քը գտղիլեացիներ են. սոքա ի՞նչ տեղից գիտեն մեր լեզուն, քանի որ սոքա չեն սովորել մեր լեզուները. ոմանք էլ ասում էին թէ հարբել են և անկապ անկապ խօսում են:

Այս ժամանակ Յիսուսի աշակերտներից Պետրոսը վերկացաւ տեղից. սկսեց խօսել և առել. — Հրեաստանի բնակիչներ և դուք որ Երուսաղեմումն էք բնակվում, լսեցէք. մենք հարբած չենք, ինչպէս դուք կարծում էք. մենք խօսում ենք մեր Փրկչի ուղարկած Առորք Հոգւոյ շնորհաց լեզուներով: Աշակերտները մարդկանց քարոզում էին Փրկչի մասին. նոքա ասում էին, որ Քրիստոս նոցա համար է մեռել որ Կայարութիւն է առել և համբարձուել, որ Փրկիչը նոցա հիմայ էլ սիրում է և ցանկանում է երջանիկ անել: Երբ այս բանը լսեցին մարդիք՝ հաւատացին առաքեալների խօսքին. այդ օրը մօտ երեք հազար մարդ հաւատաց և միբառեցան և դարձան բարեպաշտ մարդիկ:

Այս տօնը՝ մենք կատարում ենք Քրիստոսի համբարձումից տասներորդ օրը և կոչվում է Հոգեգալուստ—Պենտեկոստէ:

ՓԶ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ

1. Երբ Տէր Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ Կորա Սուրբ Խաչը երկու աւազակների խաչերի հետ միասին ընկած էր Գողգոթա սարի զլիխն, որ որ նոցա խաչեցին: Հաւատացեալները միշտ գնում էին երկրապագելու նորան. Հրեաները որպէս զի չը թողնեն նոցա պաշտելու Առորք Խաչը՝ երեք խաչերը միասին տարան ձգեցին Քրիստոսի գերեզմանի այլը և բերանը ծածկեցին քարով և հողով:

Կղողէս կայսեր կին Պատրոնիկէ թագուհին, որ Քրիստոսի հաւատացող էր, գտաւ Առորք Խաչը առաջին դարում և Յա-

Կովբոս **Տեսոնեղբայրը** բարձրացնելով  
Սուրբ Խաչը ասաց այս երգը.

Խաչի քո, Քրիստոս, Երկիրապա-  
գանեմք, և զիթաղումն քո մեծացու-  
ցանեմք, և զուրբ յարութիւնդ  
քո փառաւորեմք. Եկայր հաւատա-  
ցեալք Երկրապագեսցուք Քրիստոսի  
Աստուծոյ մնջոյ. փասն զի Եկն՝ ի  
ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պար-  
գևս աշխարհի, սուրբ Աստուծ,  
սուրբ և Հզօր, սուրբ և անմահ, որ  
յարեար՝ ի մեռելոց, ողօրմեան մեզ:

Այս տեղից սկսած հաւատացեալները  
սկսեցին Սուրբ Խաչի Վերացման տօն կա-  
տարել ամեն տարի:

2. Հատ տարիներ անցնելուց յե-  
տոյ չեթանոսները որպէս զի արգելեն  
Քրիստոնեաններին Գողգոթա գնալ և Քրիս-  
տոսի գերեզմանին Երկրապագութիւն տալ՝

շնուցին այնտեղ կռատուն: Կռատանդի-  
անոս թագաւորի մայր Հեղինէ թագուհին  
Քրիստոսից 327 տարի անց քանդել տա-  
լով այդ կռատունը՝ գտաւ Փրկչի գերեզ-  
մանը և սուրբ Խաչափայտը:

Երուսաղէմի Մակարիոս պատ-  
րիարքը մեծ հանդիսով բարձրացրեց Սուրբ  
Խաչը ժողովրդին ցոյց տալու և ամենքը  
Երկրապագութիւն տօնին նորան. և այդ տե-  
ղից ստացաւ Խաչվերաց անունը:

Խաչվերացի տօնը մենք կատարում  
ենք սեպտեմբեր ամսին: Այժմ ձեզ կը  
պատմեմ, թէ ինչու ենք այդ ամսին տօնում:

3. Քրիստոսի Սուրբ Խաչը փառաւոր  
ամանի մէջ գրուած պահպամ էր Գող-  
գոթա սարի վերայ շնուրած մեծ եկեղեցու  
մէջ և հաւատացեալները գնում էին Երկր-  
ապագութիւն անելու նորան:

Քրիստոսից 614 տարի յետոյ Պարսից  
Խոսրավ թագաւորը Երուսաղէմ քաղաքը  
առաւ ու կողոպտեց. գերի տարաւ շատ

քրիստոնեաներ և նոցա հետ Երուսաղէմի  
Օքաքարիա պատրիարքին. Քրիստոսի  
Սուրբ Խաչն էլ եկեղեցուց վերջնելով տա-  
րաւ իւր տէրութեան մայրաքաղաքը Դաւ-  
րէժ և դրաւ թագաւորական գանձա-  
րանում:

Այս մէկ պատիժ էր, որ Աստուած  
տուեց քրիստոնեաներին իրանց մեղքի հա-  
մար: Բայց Աստուած ներող է. ինչպէս  
գիտէ պատժել, այնպէս էլ ողորմում է իւ-  
րան հաւատացողներին: Այդ ժամանակ  
Յունաստանում թագաւորում էր Հե-  
րակլը. Աստուած տուեց նորան քաջութիւն.  
այնպէս որ Պարսից թագաւորը խոնարհե-  
ցաւ նորա առաջ և ուզեցաւ հաշտուիլ  
Հերակլի հետ: Հաշտութեան պայմաննե-  
րից մէկն էլ այն էր, որ պարսիկները Քրիս-  
տոսի Սուրբ Խաչը պէտք է յետ դարձ-  
նէին. այդպէս էլ եղաւ. Պարսից թագաւո-  
րը Սուրբ Խաչը իւր փառաւոր ամանովը  
յետ դարձրեց: Դերի տարուած քրիստոնեա-  
ներն էլ ազատուեցան և յետ դարձան Ե-  
րուսաղէմի Օքաքարիա պատրիարքի հետ

միասին: Այս պատճառով Հերակլ կայսրն  
էլ Երուսաղէմ գնաց և մեծ հանդէս կա-  
տարելով՝ վեր առաւ Սուրբ Խաչը և նորից  
տարաւ դրեց Գողգոթա սարի գլխին շի-  
նուած եկեղեցու մէջ:

Այս բանը պատահեցաւ Քրիստո-  
սից 629 տարի յետոյ սեպտեմբեր ամսի  
14 ին: Վասնորոյ մեր եկեղեցին էլ այդ  
տօնը կատարում է սեպտեմբեր ամսին:

ՓԵ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳՏՆԵԼԸ. ԳԻՒՏ—ԽԱՉ:

Ծիսուս Քրիստոսի երկինքը համ-  
բառնալուց յետոյ՝ Հրէաները իրանց  
պատիժը ստացան, կռապաշտ հռովմայե-  
ցիները եկան և Հրէաներին չարչարեցին  
ու գերի տարան: Բայց որովհետև Հրէա-  
ները Քրիստոսի դէմ ատելութիւն ունէին,  
այդ պատճառով էլ Քրիստոսի գերեզմանի  
տեղը Խաչափայտի հետ մէկտեղ հողի  
տակ էին թաղել: Մի քանի տարուց յե-

տոյ Հեթանոսներն էլ Յիսուսի գերեզմանի  
փոսը հողով լքցրին և նորա վերայ տա-  
ճար շինելով՝ կուռք զրին այնտեղ։ Խեղձ  
քրիստոնեաները որովհետեւ շարունակ նե-  
ղոթիւն էին կրում թէ հրէաներից և թէ  
Հեթանոսներից, այդ պատճառով չը կարո-  
ղացան մէկ հնար գտնել, որ այն տեղը  
շապականեն և այն պատուական գանձը  
հողի տակ չմնայ։

Երեք հարիւր տարի անցնելուց  
յիտոյ՝ Աստուած իւր անշափ մարդասիրու-  
թիւնով Առւրբ եկեղեցուն խաղաղութիւն  
շնորհեց։ Կոստանդիանոս կայսրը քրիստո-  
նեայ դարձաւ և հրամայեց Քրիստոսի Առւրբ  
Գերեզմանի տեղը սիրուն եկեղեցի շինել.  
Կոստանդիանոսի մայր սուրբ Հեղինէ թա-  
գուհին էլ գնաց Երուսաղէմ թէ Առւրբ  
տեղերը տեսնելու և թէ գլուխ բերելու այդ  
եկեղեցու շինութիւնը։

Երբ որ Հեղինէն Երուսաղէմ հա-  
սաւ ուզեցաւ մեր Տէր Յիսուս Քրիստո-  
սի խաչափայտը գտնել։ Այդ պատճառով  
Երուսաղէմի ամեն կողմը պտրտել տուեց,


բայց 'ի զուր տեղ. որովհետեւ հրէաների և  
կռապաշտների ձեռքով Առւրբ տեղերը բո-  
լորովին աւերտուել էին։ Հեղինէն յետոյ  
փորել տուեց այնտեղ, ուր որ խաչուած էր  
Փրկիչը. խորը փորելուց յետոյ այնանդ  
գտաւ Փրկչի գերեզմանը և նորա մօտ ե-  
րեք խաչ Յիսուսի ձեռքերի ու ոտների  
մեխերը և խաչի գլխի տախտակը, որի վե-  
րայ Պիղատոսը գրել էր։

Առցա գտնելուց յետոյ հարկաւոր  
էր իմանալ թէ որն էր այն խաչը, որի  
վերայ Յիսուս Քրիստոս մեռաւ։ Առա  
ճարն էլ գտան։ Երեք խաչերն էլ դիպցրին  
բաղաքի մէջ նոր մեռած մէկ պատանուն.  
երբ որ երրորդ խաչը դիպցրին՝ մեռած  
պատանին կենդանացաւ ու սկսեց փառք  
տալ Աստուծոյ։

Աստուածասէր սուրբ թագուհին  
այս պատուական գանձը գտնելով ուրա-  
խութիւնով լցուեցաւ և երկրպագութիւն  
տուեց Առւրբ խաչն։ Ո՞ի կտոր կտրեց  
նորանից, վերցրեց իւր հետ, որ իւրորդուն՝  
Կոստանդիանոս թագաւորին տանէ. իսկ

մնացորդի համար արծաթէ գեղեցիկ աման  
շինել տուեց թանկագին ակներով զարդա-  
րուած և յանձնեց Սուրբ Մակարիս Հայ-  
րապետին. իսկ սա դրեց այն հոյակապ  
եկեղեցու մէջ, որ Կոստանդիանոս կայսրը  
շինել տուեց Գողգոթա սարի գլխին:

Եսպէս ահա գտնուեցաւ Քրիս-  
տոսի Սուրբ Խաչափայտը. այս տօնը  
մինչև այսօր էլ մեր եկեղեցին կատարում է  
Հանդիսով Հոկտեմբեր ամսին և այս տօնը  
կոչվումէ Քիւտ—Խաչ կամ՝ Խաչ  
գիւտ:



21

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

1. ՀԱԽԱՐՄԱՆՈՒԹԻՒՆԻ ԱՄԵՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ  
ՅԱԴԹՈՒՄ է. Ֆրանց Հոֆմանի. 1877 . . . . .
2. ԽՈԽՈՐԻՑ ԴԵՊԻ ԼՈՅՍ Նոյն Հոֆմանի. 1877 . . .
3. ԳՈՒ-ԲԻՇՈՑ ԼՈՄԱՆՃԵՑՔ. Մ. ԱԷՐԱՎԱԿԻՆԻ  
1878. . . . . . . . . . .
4. ԳԵՈՐԳ ՌՕԼԵԼՅՈՑՈՆ. 1879 . . . . .
5. ԵՐՐՈՐԴ ՌՍՏԻ. առակ Լալիտէկ (պարզե ա-  
ռած Ս. Պետերբուրգի Փրէօրէլեան ընկերու-  
թեան կողմէից). 1879 . . . . .
6. ՌՕԲԻՇՈՑՈՆ. (Հաստարակութիւն ԹէՓլիզի  
տալսպական ընկերութեան) . . . . .
7. ԶԵՍԵԲՏՈՑՈՆԻ ԺԱՌԱՆԴԻ. պատկերազարդ  
վէա. 1882. . . . . . . . . .
8. ԱԿՏԵԱ. առ Սիսոնվահ. 1885 . . . . .
9. ԵԱՆ ԷՐԵԱԾ ՍՄՈԼԵՍՔ. Ն. Յանչուկի. 1885 . .
  
10. ԱՊՈԹԱՑԵՏԻ. ի պէտո մանկանց Հայաստա-  
նեաց եկեղեցւոյ . . . . . . . . . .
11. ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ. Երկրորդ տարուայ ու-  
սումն Հայոց եկեղեցական-Ճխական ուսումնա-  
րանների Համար. 1887. . . . .

282

00263x5

282

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0026373

